



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՄԱՅԻՍ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 25

ԱՂԵՐՍ ՎՏԱՆԳԻ ՊԱՀՈՒՆ

Քեզի կ'ուղղեմ աղօթքս, Տէր:

Յայտնէ ինձի քու կամքդ, Տէր,
քու ճամբաներդ սորվեցուր ինձի:

Սորվեցուր ինձի եւ առաջնորդէ՝
որ անխախտ մնամ ճշմարտութեանդ մէջ,
որովհետեւ դուն ես Աստուածս, իմ փրկիչս,
եւ ես քեզի վստահած եմ միշտ:

Տէր, յիշէ որ դուն միշտ գթած ու ողորմած ես.
ներէ այն մեղքերն ու յանցանքները,

որ իմ մարդաշ փարիներուս գործած եմ,
եւ յիշէ զիս, Տէր, ողորմութեամբդ,
որովհետեւ բարի ես:

Տիրոջ ճամբաները սէր ու հաւաքարմութիւն են
անոնց՝ որոնք իր ուխտը եւ պարտաւորանքները կը պահեն:

ՇԱՐԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
այ քո հոգեւոր լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

6:1-30

ԵՐՈՒՄԱՂԷՄ ԹՇՆԱՄԻՆԵՐԷ ՇՐՋԱՊԱՏՈՒԹՅՈՒՆ (6:1-8)

Ահա ազդարարության կոչը, ահազանգի փողի ձայնը հնչեցուցեք, որովհետև հիսսիսն չարիք է մեծ կոտորած կու գայ: Այո, ազդարարություն մըն է, որպեսզի ժողովուրդը պատրաստուի, Երուսաղեմն քաշուցեք (1 հմր):

Միտնը կը նմանցնէ գեղեցիկ աղջնակի մը եւ փափուկ կնոջ մը, առաւել եւս այն դաշտին ուր հովիւներ պիտի գան իրենց հօտերը արածելու համար, ու անոր շուրջը վրաններ դնելու: Այն պարկերացու մը ուրիշ բան չէ եթէ ոչ անոր կործանումը, ուր թշնամին պիտի գայ զայն գրաւելու եւ իրեն համար նստավայր ընելու (2-3 հմր):

Երեմիայ մարգարէն պարկերաւոր լեզուէն կ'անցնի պարզ ու յարակ բացաբարութեան, ներկայացնելով զայիք պարերագմը ահաւոր վիճակի մը, որ թշնամին երբեք պիտի չուզէ դադար առնել, կէտորուան փառքը կամ իրիկուան մութը երբեք ալ արգելք պիտի չըլլան, այլ պիտի ուզէ պարերագմի (4-5 հմր) կոտորելու եւ բերդերը կործանելու համար:

Ինչո՞ւ այսքան խիստ, որովհետև «պարծուելու արժանի քաղաք մըն է, հարստահարութեամբ լեցուած, գրկանք ու յափշտակութիւն կայ» զայն նմանցելով ջրհորի մը, որ ջուր կը բխեցնէ (6-7 հմր), այնքան շար է ջուրը, որ մինչեւ իսկ դուրս կու գայ անկէ: Որովհետև ընդհանրապէս ջրհորէն ջուր պէտք է քաշել, ինք դուրս չի գար, բայց այնքան շարքաւ է, որ սկսած է դուրս գալ: Ուրեմն, ի՞նչ ընել: «**Երուսաղեմ, իրարուէ, ջրլայ թէ Ասրուծոյ Հոգին քեզմէ զարուի, ջրլայ թէ քեզ անբնակ եւ աներակ երկիր մը դարձնեն»** (8 հմր): Այսինքն՝ դարձի եկուր, ապաշխարէ:

ԱՊՍԱՄԱ ԻՍՐԱՅԷԼ (6:9-15)

Այգեկութի պարկերով կը ներկայացնէ Իսրայէլի կոտորածը: Ինչպէս որ այգիէն կը հաւաքեն խաղողը, մինչեւ իսկ մնացորդացը, նոյնպէս պիտի պարահի երբ թշնամին պիտի յարձակի (9 հմր):

Որո՞ւ խօսի մարգարէն, որովհետև անոնք ականջ ունին ու չեն լսեր, մանաւանդ՝ «**անոնց ականջները անթլիսար են, եւ չեն կրնար մտիկ ընել: Անոնք Տիրոջ խօսքէն չեն ախորժիր»** (10 հմր): Այնպէս ինչպէս անթլիսար սիրտը, նոյնպէս ալ անթլիսար ականջները, որպէսզի լսեն Ասրուծոյ խօսքը: Որովհետև անթլիսար ականջը, ոչ միայն չի կրնար լսել Ասրուծոյ խօսքը, այլ նաեւ՝ չախորժիր:

Ահա Ասրուծոյ բարկութեամբ լեցուած մարգարէն ալ չի կրնար զսպել, ապա Ասրուծոյ բարկութիւնը պիտի բորբոքի բոլորին վրայ անխտիր, այր թէ կին, փոյլ թէ ծեր (11-12 հմր): Ինչո՞ւ: Որովհետև «**ազատութեան երեւէ զացին, մարգարէն մինչեւ քահանան ստութեամբ կը վարուին»** (13 հմր): Որոնց պարտականութիւնն է բժշկել հիւանդը, ու անոնց ցոյց փալ Ասրուծոյ ճամբան, եւ վերքը բուժել խորունկէն եւ ոչ հարեւանցի: Եւ ստութեամբ լեցուն կ'ըսեն. «**Խաղաղութիւն, խաղաղութիւն, բայց խորքին մէջ խաղաղութիւն չկայ»** (14 հմր): Իրենց ըրածին համար պէտք էր ամչնային ու պարկառէին, բայց ընդհակառակը՝ չեն ամչնար ու չեն պարկառիր, անոր համար ալ երբ Տէրը այցելէ, այսինքն՝ դատաստան փեսնէ, որ թշնամին ճամբով պիտի գայ, ահա այն ատեն պիտի գորին (15 հմր):

ԻՍՐԱՅԷԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՃԱՄԲԱՆ ԿԸ ՄԵՐԺԷ (6:16-21)

Ճամբորդի մը պարկերով, որովհետև մարդը ճամբորդ է այս երկրաւոր ու ժամանակաւոր կեանքի ընթացքին, անոր համար ալ ինչպէս անցեալին Տէրը յիշեցուցած է ցոյց փուած էր Իսրայէլի ժողովուրդին թէ որ ճամբան պէտք էր ընտրել, որպէսզի կեանք ունենար. արդարութեան, խաղաղութեան ու բարի ճամբան, «**որպէսզի անոնց հոգիները հանգիստ գտնէին, բայց անոնք մերժեցին»** (16 հմր): Իսկ եթէ հիմա անոնք կորսնցուցած են այդ ճամբան, պէտք է որ հարցնեն թէ ո՞րն է այդ ճամբան: Հակառակ այս մերժումին, Տէրը դէպ կարգեց այս ժողովուրդին վրայ, որպէսզի ազդարարութեան փողը հնչեցնէ, բայց անոնք ըսին. «**մտիկ պիտի չընենք»** (17 հմր):

Ուստի, ի՞նչ կը սպասուի. չարիք: Տէրը կոչ կ'ուղղէ ազգերուն եւ Իր ժողովուրդին, «**ձեր խորհուրդներուն պտուղը, որ Տիրոջ խօսքը մտիկ չըրիք եւ օրէնքը մերժեցիք»** (19 հմր): Ահա որպէսզի իրենց անօրէնութիւնը ծածկեն, անոնք Սաբայէն կնդրուկ կը բերեն, ու հեռաւոր երկրէն անուշահոտ խունկ, բայց անոնց գոհերը երբեք ալ ընդունելի ու հաճելի չեն Ասրուծոյ, որովհետև մաքուր սրտէ չէ (20 հմր):

Այս իսկ պարճառով Ասրուած անոնց առջեւ գործնան քար պիտի դնէ, այսինքն՝ զայիք թշնամին որ պիտի յարձակի, որպէսզի անոր զարնուելով գորին: Յետոյ, սակայն, այդ գործնան քարը Քրիստոս ինք պիտի ըլլար, ինչպէս պիտի ըսէ Առաքեալը (Ա Կորնթ 1:23):

ՀԻՄՆՈՒՄ ԿՍՊԱՏԱԿՆԵՐ (6:22-30)

Ահա հիսսիսն պիտի գայ ազգ մը աղեղ ու նիզակ կրող, այսինքն՝ պատերազմող: Անգութ ու անողորմ (22-23 հմր): Ինչպէս Մատթէոս Աւետարանիչին մէջ Քրիստոս պիտի յիշեցնէ վերջին ժամանակներուն պատահելիք վիճակը, նոյնպէս ահա այստեղ եւս մարգարէին ճամբով Տէրը կը յիշեցնէ նոյնը (25 հմր): Ի՞նչ ընել: «**քուրձ հագիր ու մոխորի մէջ թաւալիր**» (26 հմր), այսինքն՝ գղջումի ու ապաշխարութեան նշան, որովհետեւ կործանողը յանկարծ պիտի գայ (26 հմր):

Ահա Տէրը մարգարէն իբրեւ դէպ, իբրեւ բերդ կը կարգէ այդ ժողովուրդին վրայ, նախ ասով վստահեցնելու մարգարէին, թէ բերդի պէս է ու չսասանի: Միւս կողմէ, ժողովուրդը ապստամբ, ապականած, բանասարկութեան կը պորտփն, որոնց մէջ արծաթ ու ոսկի չկայ, այլ պղինձ ու երկաթ: Այսինքն՝ խառնուած ապականութեամբ: Արծաթագործի օրինակով, Տէրը ցոյց կու տայ, թէ ինչեր փորձեց որպէսզի այս ժողովուրդը իր սխալ ճամբէն ետ դառնայ, բայց արդէն «**փքոցը այրեցաւ, կապարը կրակէն հաքաւ, որ կ'օգտագործուին արծաթը մաքրելու, արծաթագործը պարապ տեղ կ'աշխատի, որովհետեւ չարերը չվարարուեցան**» (29 հմր): Անոր համար ալ անոնք «**անպիտան արծաթ պիտի կոչուին, որովհետեւ Տէրը մերժեց զանոնք**» (30 հմր): Տէրը որ Ինք իսկ է ճշմարիտ Արծաթագործը, այսինքն՝ մաքրողը, զտողը, բայց եթէ Ինք կը մերժէ, արդէն կը նշանակէ ոչ մէկ բան պիտան է: